Բնակարանային ապահովության և հիփոթեքային շուկայի զարգացման ծրագիր (HOME)

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի գնահատման ձևաթուղթ

Նախագիծ (խորհրդատվության համար)

Օգոստոս 2025 թ.

Գնահատման այս ստուգաթերթը պատրաստվել է Ծրագրի 1.2 ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվող «Երկարաժամկետ բնակարան ձեռքբերման համար տրամադրվող սուբսիդիաներ» միջոցառումների համար, որոնք դասակարգվում են ըստ ցածրից մինչև միջին բնապահպանական և սոցիալական (ԲԵՍ) ռիսկի աստիճանի: Դրա նպատակն է ուղղորդել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (ԱՍՀՆ)՝ գնահատելու մասնակից բանկերի միջոցով տրամադրվող ֆինանսավորման[1] հետ կապված հնարավոր ԲԵՍ ռիսկերն ու ազդեցությունները, և բացառել այնպիսի գործողություններ, որոնք կարող են առաջացնել զգալի կամ բարձր ռիսկեր բնության և մշակույթի պահպանվող տարածքների վրա ազդեցության առումով կամ հանգեցնել վերաբնակեցման, որոնք թույլատրելի չեն Ծրագրի շրջանակում: ԲԵՍ գնահատման ընթացակարգը բաղկացած է երկու փուլից. (1) նախնական ստուգում՝ օգտագործելով բացառությունների ցանկը՝ անհամապատասխան գործունեությունը բացառելու համար և (2) համապատասխան գործունեության հետագա ստուգում՝ որոշելու համար, թե արդյոք տվյալ գործունեությունը կպահանջի կառավարման միջոցների կիրառում ԱՍՀՆ-ի կողմից սահմանվելիք Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգում (ԲՍԿՀ):

Տեղեկատվություն բնակարանի վերաբերյալ

Բնակարանի տեսակը	*Նշել բնակարանի տեսակը:* *(ա) նոր կամ գոյություն ունեցող անհատական բնակելի տուն* *(բ) նոր կամ գոյություն ունեցող բնակարան* *(գ) բնակարան կառուցվող շենքում* *(դ) մեկ ընտանիքի համար նախատեսված անհատական բնակելի տան կառուցում*
Գնահատված արժեքը	
Բնակարանի ձեռքբերման հավաստագիր No.	*Ներկայացնել բնակարանի գնման այն վկայականի համար(ներ)ը, որ(ոնք)ը օգտագործվել են հիփոթեքային վարկ ստանալու համար*
Վայրը	*Նշել համայնքի հասցեն և անվանումը*
Այլ ֆինանսական գործունեություն	*Անհրաժեշտության դեպքում, նշել բնակարանային ապահովման հետ կապված ցանկացած լրացուցիչ գործունեություն, որին կաջակցի Ծրագիրը (օրինակ՝ վերանորոգում կամ այլ):*
Գնահատման ամսաթիվը	

1 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող տեղահանված ընտանիքների Բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիր (Որոշում թիվ 710-L, 16 մայիսի 2024 թ.) :

1. Բացառության ցանկ

Գործունեությունը կհեռացվի նախագծի ֆինանսավորումից, եթե ստորև նշվածներից որևէ մեկի պատասխանը «Այո» է.

Գործունեություն	Այո	Ոչ	Կիրառելի չէ	Մեկնաբանություն (եթե անհրաժեշտ է)
1. Արդյո՞ք գոյություն ունեցող բնակարանի կամ անհատական բնակելի տան սեյսմիկ կայունությունը ցածր է ՀՀ սեյսմիկ նորմերից, կամ շենքը դասակարգված է որպես «ռիսկային» կամ վթարային շենք:				*Հակիրճ մեկնաբանություն տալ (ա) և (բ) տեսակի բնակարանների սեյսմիկ վիճակի և ռիսկի կատեգորիայի վերաբերյալ*
2. Արդյո՞ք ֆինանսավորվող բնակարանները, մասնավորապես մեկ ընտանիքի համար նախատեսված տների կառուցումը, կլինեն որոշակի բնական կենսավայրերի, պահպանվող տարածքների կամ բուֆերային գոտիների ներսում կամ դրանց հարևանությամբ:				Համառոտ նկարագրել վերը նշված (դ) տիպի բնակարանի հարակից տարածքը՝ կապված բնության պահպանվող տարածքների հետ:
3. Արդյո՞ք ֆինանսավորվող գործունեությունը, մասնավորապես՝ մեկ ընտանիքի համար նախատեսված տների կառուցումը, կլինի մշակութային ժառանգության վայրի կամ դրա պահպանվող գոտիների մոտակայքում կամ դրանց ներսում:				*Համառոտ նկարագրել վերը նշված (դ) տիպի բնակարանի հարակից տարածքը՝ կապված մշակութային պահպանվող տարածքների հետ:*
4. Հնարավո՞ր է, որ ֆինանսավորվող գործունեությունները հանգեցնեն նոր փոփոխությունների, որոնք կարող են վտանգել, քանդել կամ ներառել մշակութային ժառանգության արժեք ներկայացնող շենքերի վերականգնում:				
5. Արդյո՞ք ֆինանսավորվող բնակարանը պարունակում է կամ				*Հակիրճ մեկնաբանություն տալ գոյություն ունեցող*

կառաջացնի վտանգավոր թափոններ (օրինակ՝ գոյություն ունեցող բնակելի տներում ասբեստ պարունակող նյութերից (ACM) տանիքներ կամ կապարային ներկեր՝ (LBP) գոյություն ունեցող բնակարանների կամ տների պատերին)։				*անհատական բնակելի տների տանիքի և պատերի, ինչպես նաև գոյություն ունեցող բնակարանների կամ բնակելի տների պատերի վիճակի վերաբերյալ (օրինակ ՝խորհրդային ժամանակներում կառուցված շենքերում)։*
6. Արդյո՞ք բնակարանային վարկը կհանգեցնի հարկադիր վերաբնակեցման, ֆիզիկական կամ տնտեսական տեղաշարժի կամ հողի ձեռքբերման, որը կհանգեցնի մարդկանց կամ բիզնեսի տեղափոխման։				
7. Արդյո՞ք բնակարանային վարկը ֆինանսավորում է անշարժ գույք, որի նկատմամբ գոյություն ունեն երրորդ կողմի պահանջներ, ոչ պաշտոնական օգտագործում, սեփականության վիճաբանություններ կամ չլուծված իրավական գործընթացներ։				

2. ԲԵՍ գնահատման հարցաթերթիկ

Ուղղորդող հարցեր	Այո	Ոչ	Հաջորդ քայլերը
ԲՍՍ2. Աշխատանք և աշխատանքային պայմաններ			
1. Արդյո՞ք բնակարանային վարկը ֆինանսավորում է մեկ ընտանիքի համար նախատեսված տան կառուցումը, որը պահանջում է աշխատուժի ներգրավում։			Եթե «Այո»՝ ապա լրացնել ստորև ներկայացված 2-րդ և 3-րդ կետերը։ Աշխատուժի կառավարման միջոցները պետք է կիրառվեն՝ համաձայն Ծրագրի գործառնական ձեռնարկի (ԾԳՁ) և Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի (ԲՍԿՀ) ընդունված դրույթների։

2. Արդյո՞ք աշխատողներն իրենց աշխատանքային վայրում կենթարկվեն այնպիսի վտանգների, որոնք պետք է կառավարվեն տեղական կանոնակարգերին համապատասխան:			Եթե «Այո»՝ ապա հղում անել աշխատուժի կառավարմանն ուղղված միջոցառումներին, ինչպես նշված է ԾԳՁ-ում և համաձայն է ԲՍԿՀ-ի ընդունված դրույթներին:
3. Արդյո՞ք ֆիզիկական աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերն ու վտանգները պահանջում են, որ աշխատողներն օգտագործեն անձնական պաշտպանիչ միջոցներ (ԱՊՄ):			Եթե «Այո»՝ ապա հղում անել աշխատուժի կառավարման միջոցառումներին, ինչպես նշված է Ծրագրի ԾԳՁ-ում և համաձայն է ԲՍԿՀ-ի ընդունված դրույթներին:
ԲՍՍ3. Ռեսուրսների արդյունավետություն և շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելում և կառավարում			
4. Արդյո՞ք գործունեությունը կառաջացնի շինարարության հետ կապված թափոններ, և արդյո՞ք դա կպահանջի կառավարման միջոցառումներ՝ համաձայն տեղական կանոնակարգերի:			Եթե «Այո»՝ ապա միջոցառումներ պետք է մշակվեն և ընդունվեն որպես ԲՍԿՀ-ի մաս:
ԲՍՍ4.Համայնքի առողջություն և անվտանգություն			
5. Արդյո՞ք բնակարանային վարկը ֆինանսավորում է մեկ ընտանիքի համար նախատեսված առանձնատան կառուցումը, որը կարող է առաջացնել աղմուկ, փոշի կամ այլ անհարմարություններ և (կամ) հանգեցնել վատ կառավարվող շինարարական հրապարակների, որոնք առողջության և անվտանգության ռիսկեր են ստեղծում հարակից տարածքների բնակիչների համար:			Եթե «Այո»՝ ապա միջոցառումներ պետք է մշակվեն և ընդունվեն որպես ԲՍԿՀ-ի մաս:
ԲՍՍ8. Մշակութային ժառանգություն			
6. Արդյո՞ք ֆինանսավորումը կներառի մշակութային նշանակության շենքերում գտնվող գույքի վերանորոգում, որը կպահանջի ազգային պահանջներին համապատասխան կառավարման միջոցառումներ:			Եթե «Այո»՝ ապա միջոցառումներ պետք է մշակվեն և ընդունվեն որպես ԲՍԿՀ-ի մաս[2]:

[2] Ըստ ԲՍՍ8-ի, ԲՍԿՀ-ն պետք է անդրադառնա նաև պատահական հայտնաբերումների ընթացակարգերին:

3. Եզրակացություն ֆինանսավորման վերաբերյալ

Վերոնշյալ գնահատման արդյունքների հիման վրա, տալ եզրակացություն ֆինանսավորման վերաբերյալ.

ա. Ֆինանսավորումը հաստատված է և պահանջում է մեղմացման միջոցառումներ ԲՍԿՀ-ի համաձայն ☐

բ. Ֆինանսավորումը հաստատված է և չի պահանջում մեղմացման միջոցառումներ ☐

գ. Ֆինանսավորումը մերժված է ☐